ՍԷՅՐԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեծացուսցէ շարականները՝ իբրեւ հոգեւոր երգի տեսակ եւ իբրեւ միջնադարեան քնարերգութեան արտայայտութիւն, բնականաբար կրում են հոգեւոր երգը, եւ, առհասարակ, միջնադարեան ժամանակաշրջանի բանաստեղծութիւնը որոշակիօրէն սահմանների մէջ դնող չափորոշիչների կնիքը: Անշուշտ, ամենից առաջ այդ սահմանափակումներն արտայայտւում են շարականների արտաքին-ձեւական յատկանիշներում՝ սխեմատիկ դաշտում:

Արտաքին ձեւական հատկանիշները.

Մեծացուսցէ շարականները երեք տնից բաղկացած բանաստեղծութիւններ են (բացառութիւն են կազմում Ծննդեան չորրորդ օրուայ կանոնի ճաշու միաւորի տակ դրուած մեծացուսցէն[1], ինչպէս նաեւ Յարութեան կանոնի երկու այլ մեծացուսցէներ[2]): Առաջին տան վերջում եւ երկրորդ տան սկզբում երգում է «Փառք Հօր...», իսկ երկրորդ եւ երրորդ տների միջնամասում՝ «Այժմ եւ միշտ...»[3]: Մեծացուսցէները չնայած յօրինուել են համաձայն Հայ Եկեղեցու ավանդական ութ ձայնեղանակների[4], սակայն, ի տարբերութիւն կանոնի[5] մաս կազմող միւս շարականական միաւորների, երաժշտութեան տեսանկիւնից հիմնականում ձերբազատուած են ձայնեղանակների թելադրիչ ազդեցութիւնից ու երբեմն միօրինակ ռիթմից: Այս իմաստով հեղինակային անհատական գծերը չափազանց արտայայտուած են խնդրոյ առարկայ շարականներում:

Մանուկ Աբեղեանը, իր «Ուրուագծեր հայոց գրականութեան պատմութիւնից» յօդուածում խօսելով ընդհանրապէս հոգեւոր երգարուէստի մասին, գրում է. «Չպէտք է մոռանալ մի հանգամանք եւս. այդ բանաստեղծութիւնը չի յօրինուած կարդացուելու համար, այլ եկեղեցում աղօթաւորների կողմից երգուելու. հետեւապէս այս գրական տեսակը գնահատելու համար միշտ պիտի նկատի ունենալ նաեւ եղանակը, որ բանաստեղծութեանը տալիս է իր գոյնը»[6]: Հետեւաբար պէտք է նկատի ունենալ, որ ցանկացած շարական որեւէ տեսանկիւնից քննելիս չի կարելի շրջանցել նրա երաժշտական արժէքը, քանի որ շարականը զուտ բանաստեղծական տեքստ լինելուց առաջ նախ եկեղեցում կատարուող երգ է:

Մեծացուսցէ շարականների մի խումբ աչքի է ընկնում իր մեղեդային իւրահատուկ

---

1 «Շարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց», Ս. Էջմիածին, 1861, էջ 37-38 (այսուհետ՝ «Շարական», էջ...):

2 Տե՛ս անդ, էջ 57-58 եւ 62-63:

3 Աւանդութեան յամաձայն՝ այս հատուածներն առաջին անգամ երգել է Յակոբոս Տեառնեղբայրը:

4 Ձայնեղանակների ծագման կամ հեղինակների մասին մեզ տեղեկութիւններ չեն հասել: Այս մասին Նորայր արք. Պողարեանը գրում է. «Մեր եկեղեցւոյ շարականները գրուած են ութ ձայներու եւ հինգ սպեղիներու վրայ... Ընդհանրապէս կկարծուի թէ բառերուն հեղինակը՝ միեւնոյն ատեն հեղինակն է նաեւ եղանակին: Կամ բանաստեղծը իր քերթուածը կը յօրինէ արդէն ընդունուած եղանակի մը կաղապարին համաձայն» (**Նորայր արք. Պողարեան**, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 38):

5 Հոգեւոր երաժշտութեան մէջ որոշակի յաջորդականութեամբ դասաւորուած երգասացութիւնների շարք (հմմտ. **Աննա Արեւշատեան,** Կանոն, «Քրիստոնեայ Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 471):

6 **Մ. Աբեղեան**, Ուրուագծեր հայոց գրականութեան պատմութիւնից, «**Արարատ»,** 1912, Ժ, էջ 102 (այսուհետ՝ **Մ. Աբեղեան**, Ուրուագծեր):

ստեղծագործական զարգացումներով ու որեւէ այլ շարականի պարագային չկրկնուող նրբակերտութեամբ: Ինքնատիպ նմոյշներ են Յարութեան կանոնի՝ «Ով գերահրաշ ծաղիկ»[7], «Աստուածածին երկնային»[8], ինչպէս նաեւ «Յամօրէն ննջեցելոց ի Քրիստոս» կանոնի «Լեառն վիմածին»[9] սկսուածքներով մեծացուցէները եւ այլն: Երաժշտական տեսանկիւնից մեծացուցէները Շարակնոց ժողովածուի ամենաանկախ միաւորներից են. այս շարականների մեծամասնութեան համար երաժշտութիւնը սահմանափակումների մէջ դնող չափորոշիչներ գրեթէ չկան:

Ինչ վերաբերում է մեծացուցէների բանաստեղծական կաղապարին, արդէն նշեցինք, որ դրանք երեք տնից բաղկացած, հիմնականում արձակ եւ երբեմն էլ տաղաչափական յօրինուածքով երգեր են: Մանուկ Աբեղեանը, խօսելով շարականների մասին, գալիս է այն եզրակացութեան, որ նրանցում «ձեւի միատեսակութիւնը արդիւնք է նիւթի միատեսակութեան...»[10]: Նոյն միատեսակութիւնը տարածւում է նաեւ մեր խնդրոյ առարկայ շարականների վրայ: Գրեթէ ամէն մի բանաստեղծութեան մէջ ինքն իրեն կրկնող ձեւի պատճառը մեծացուցէների չափազանց նեղ բովանդակային դաշտն է: Ձեւի միատեսակութիւնը տարածւում է ոչ միայն արտաքին կաղապարի, այլեւ առանձին-առանձին ամէն մի տան վրայ: Միեւնոյն մեծացուցէ շարականի ներսում հազուադէպ է պատահում, որ երեք տներից մէկը փոքր-ինչ այլ արտաքին ձեւ ունենայ: Ասուածին օրինակ կարող է ծառայել Յարութեան կանոնի հետեւեալ մեծացուցէն.

Անարատ տաճար բնակարան անբաւ Բանին Աստուծոյ, Մարիամ սուրբ կոյս. զքեզ եւ զծնեալն ի քէն մեծացուցանեմք:

Յարգանտի կրեցեր, որ յառաջ քան զ յաւիտեանս ի Հօրէ զԲանն, եւ ծնար մարմնով. զքեզ, եւ զծնեալն ի քէն մեծացուցանեմք:

Արդ խնդրեմք ի քէն՝ անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց առ Որդին քո Միածին . փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց[11]:

Անշէն աչքով էլ կարելի է նկատել, որ այս շարականի առաջին եւ երկրորդ տները բովանդակութեամբ աղերսուած են միմեանց: Առաջին տան մէջ շարականագիրը Տիրամօրն անուանելով «անարատ տաճար», «սուրբ կոյս» եւ այլն, երկրորդ տան մէջ սկսում է գովերգել նրան: Այսպիսով՝ առաջին տներն իմաստային տեսակէտից չափազանց ընդելուզուած եւ ձեւի տեսակէտից բաւական համասեռ են հանդէս գալիս, ինչը չի կարելի ասել երրորդ տան հետ ունեցած նրանց յարաբերութեան պարագային: Երրորդ տունը բարեխօսական հատուած է՝ եկեղեցու հաւատացեալների անունից Տիրամօրն ուղղուած բարեխօսական աղօթք:

Ինչո՞ւ է իւրահատուկ երրորդ տունը եւ ինչո՞ւ է տարբեր նախորդ երկու տներից: Բանն այն է, որ, կապուած օրուայ խորհրդի կամ տօնի հետ, իւրաքանչիւր շարական իր առջեւ ունի դրուած որոշակի նպատակ՝ ծառայել այդ տօնի կամ խորհրդի լուսաբանմանը, այս իմաստով մեր խնդրոյ առարկայ մեծացուցէի առաջին եւ երկրորդ տներն իրենց ասելիքը ձեւակերպում են որոշակիօրէն՝ ի տարբերութիւն երրորդ տան, որն անկախ է բանաստեղծու-

7 «Շարական», էջ 58-59:
8 Անդ, էջ 60-61:
9 Անդ, էջ 675:
10 Տես **Մ. Աբեղեան**, Ուրուագծեր, էջ 1002:
11 «Շարական», էջ 58:

թեան շարակարգից: Այն կարելի է անուանել «թափառող թեմա», որի առկայությունը ցանկացած շարականի վերջում, անկախ շարակարգից, բնական է, մանաւանդ եթէ ցմոռանանք, որ շարականն առաջին հերթին աղօթք է:

Թերեւս ասուածի ամենադիպուկ արտայայտութիւնը իւրաքանչիւր մեծացուսցէի կրկնակ կամ դարձ կոչուած հատուածներն են: Սփորեւ կփորձենք աւելի մանրամասն քննել բաւական հետաքրքրական այս հատուածները:

Դարձը Մանուկ Աբեղեանը հետեւեալ կերպ է սահմանում. «Դարձը կամ կրկնակը այն տողերը կամ բառերն են, որ կրկնւում են իւրաքանչիւր տան վերջում, եւ սրանց մէջ երեւան է գալիս երգչի զգացումը»[12]: Մենք յարմար ենք նկատել մեր ուսումնասիրած մեծացուսցէ շարականներն ըստ իրենց կրկնակների բաժանել երկու մեծ խմբի.

Ա. Այս խմբի մէջ մտնում են թուով 39 մեծացուսցէներ: Տուեալ խմբի շարականների դարձի էական բառը «մեծացուցանեմք» փառաբանական արտահայտութիւնն է (յարմարեցուած Մարիամի երգի առաջին բառին): Օրինակ՝ *«...ազգ եւ ազինք զքեզ մեծացուցանեմք*[13]», *«...անդադար երգով սրբոք զքեզ միշտ մեծացուցանեմք*[14]», *«...զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք*[15]» եւ այլն: Այս խմբի որոշ շարականների իւրաքանչիւր տան վերջում կրկնւում է նոյն դարձը. օրինակ՝ *«...վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք»* արտահայտութիւնն իբրեւ կրկնակ է ծառայում թէ՛ Սուրբ Աստուածածնի Աւետման կանոնի եւ թէ՛ Քրիստոսի Ծննդեան երկրորդ օրուայ կանոնի մեծացուցէների համար, իսկ «... օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք» կրկնակը նոյնն է Յարութեան «Ո վ գերահրաշ ծաղիկ» սկսուածքով մեծացուցէի եւ Վարդաւառի կանոնի առաջին օրուայ մեծացուցէի պարագային, այն աննկատ շարադասական փոփոխութեամբ՝ «... զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք» տեսքով հանդէս է գալիս Սուրբ Աստուածածնի Աւետման կանոնում:

Կրկնակների չափազանց հետաքրքիր եւ իւրայատուկ դրսեւորումների ենք հանդիպում այս խմբի հետեւեալ շարականներում.

Զքեզ, ամենօրհնեալ Աստուածածին, մայրդ լուսոյ եւ առագաստ Աստուծոյ Բանին, մեծացուցանեմք:

Զքեզ, պայծառ երկինք եւ ամպ լուսեղէն, ծնօղ Արարչին եւ մորենի անկիզելի, մեծացուցանեմք:

Զքեզ, դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան, բարձող անիծից եւ սրօրէ հողեղէն, մեծացուցանեմք:

(Մեծացուսցէք Յարութեան Տեառն, էջ 59-60):

Զքեզ աստուածածին, որ վերս օրհնիս ի զօրաց հրեշտակաց. ազգ մարդկան կենդանեայց մեծացուցանեմք:

Զքեզ բնակ հրեղէն աստուածութեան՝ յիմանալի զօրացն երանեալ, ազգ մարդկան կենդանեայց մեծացուցանեմք:

Զքեզ մայր Էմմանուէլի, մարգարէին յառաջ գուշակեալ, ազգ մարդկան կենդանեայց մեծացուցանեմք:

(Մեծացուսցէք Յարութեան Տեառն, էջ 60):

---

12 Տես **Մ. Աբեղեան**, Ուրուագծեր, էջ 1004:

13 «Շարական», «Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին», էջ 20:

14 Անդ, «Կանոն Յովակիմայ եւ Աննայի՝ ծնողաց սրբոյ Աստուածածնին», էջ 9:

15 Անդ, «Կանոն սրբոյ Զատկի», էջ 285:

Մեջբերուած երկու շարականներն իրենց կաղապարային յօրինուածքով չափազանց նման են. երկու շարականների պարագայում էլ իւրաքանչիւր տուն սկսւում է «զքեզ» բառով: Առաջին շարականի տներն աւարտւում են «մեծացուցանեմք» բառով, իսկ երկրորդինը «ազգ մարդկան կենդանեայց մեծացուցանեմք» բառերով: Երկու դեպքում էլ տների վերջաւորութիւնները կապւում են «զքեզ» բառին: Հետեւաբար այս շարականների կրկնակը ոչ թէ «*մեծացուցանեմք*» բառն է (առաջինի պարագային), այլ «*զքեզ . . . . . մեծացուցանեմք*» կապակցութիւնը, իսկ երկրորդի պարագային ոչ թէ «ազգ մարդկան կենդանեայց մեծացուցանեմք»-ը, այլ «*զքեզ . . . . . ազգ մարդկան կենդանեայց մեծացուցանեմք*»-ը: Պարզապէս նախադասութեան ներսում դարձի միաւորները հեռացել են, ինչը միանգամայն բնական կարող էր թուալ, եթէ մենք նախապէս ծանօթ չլինէինք դարձի աբեղեանական սահմանմանը, որտեղ շեշտւում է, որ դարձ կոչւում են իւրաքանչիւր տան վերջում կրկնուող բառերը կամ տողերը (փաստօրէն մենք տեսանք, որ կրկնակը կազմող որոշ միաւորներ կարող են գտնուել նաեւ տների սկզբում): Կրկնակի նմանօրինակ երկփեղկուած դրսեւորում ունի նաեւ Քրիստոսի Ծննդեան չորրորդ օրուայ կանոնի մեծացուցէի առաջին տունը.

Զքեզ Աստուածածին, աղբիւր անսպառ լուսոյ, որ լուսաւորէ զհաւատացեալս. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք[16]:

Դարձի միաւոր կազմող «*զքեզ Աստուածածին*» բառերը դարձեալ ամենասկզբում են, իսկ կրկնակի շարունակութիւնը՝ «*միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք*»-ը, վերջում է:

Դարձի իւրահատուկ դրսեւորման տեսակէտից հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ նոյն մեծացուցէի յաջորդ երկու տները: Երկրորդ տան մէջ կրկնակն իր սովորական դիրքում է՝ «*զքեզ Աստուածածին, մեծացուցանեմք*», ինչն առաջին տան մէջ երկփեղկուած էր: Միայն թէ այս դեպքում կրկնակը փոքր-ինչ խմբագրուած է. զեղչուած է «*միաբանական ձայնիւ երգով*» միաւորը: Երրորդ տան մէջ զեղչուած է «*զքեզ Աստուածածին*»-ը:

Ի վերջոյ, ամփոփելով այս շարականի կրկնակների դրսեւորման ձեւերը՝ ունենում ենք հետեւեալ պատկերը.

Առաջին տուն. *Զքեզ Աստուածածին . . . . . միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն. . . . *զքեզ Աստուածածին մեծացուցանեմք:*

Երրորդ տուն. . . . *միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:*

Վերը բերուած օրինակներից կարելի է ենթադրել, որ դարձ կարող են կոչուել ոչ միայն այն տողերը կամ բառերը, որ կրկնւում են իւրաքանչիւր տան վերջում, այլեւ երբեմն դարձի մաս կարող են կազմել նաեւ տների սկզբում կրկնուող բառերը: Բացի այդ, բոլորովին պարտադիր չէ, որ իւրաքանչիւր տան համար կրկնուի նախորդ տան դարձը. այն կարող է զարգացում ունենալ, ինչպէս վերջին օրինակում էր: Ասուածին իբրեւ ապացոյց՝ պարզապէս բերենք այլ օրինակներ, որոնք մեր նախորդ բերածների հետ միասին կա՛մ բացառութիւններ են՝ իշխող կանոններից դուրս, կա՛մ եւ ապացոյցներ, ըստ որոնց պետք է եզրակացնել, թէ կրկնակ ստեղծելու հարցում շարականի հեղինակի համար երբեւէ որեւէ կանոն կամ չափորոշիչ գոյութիւն չի ունեցել (որ քիչ հաւանական է):

16 «Շարական», էջ 36:

Սասունցոնում ամրոցամեջ գտնված ոսկեղջյուր

Տիգրան Երվանդի դրամ, գտնված Արտաշատի պեղումների ընթացքում

8-րդ և 9-րդ դարերում ամրոցամեջ գտնված գյուղատնտեսական իրերի մի խումբ

Բաղդիի հարավային դարպասի սենյակի հատակագիծ

8-րդ սենյակի վիմագրի եզրագիծ

Վիշապաձայնի դեղ մնացած մասերը

9-րդ սենյակի խաչաձև վիմագրի եզրագիծ

Ամենամեծ վիմագրի մի հատվածը

Այսպիսով՝ Աստուածայայտնութեան Ճրագալոյցի կանոնի ճաշու միաւորի տակ զետեղուած մեծացուսցէի երրորդ տան դարձը տարբեր է առաջին եւ երկրորդ տների կրկնակներից: Նոյնն է Քրիստոսի Ծնունդեան եօթներորդ օրուայ կանոնի եւ Աղուհացից չորրորդ կիրակի օրուայ մեծացուսցէների պարագան: Ստորեւ ներկայացնում ենք յիշեալ շարականների կրկնակների սխեմատիկ պատկերները.

Ա) Առաջին տուն. . . . *օրհնութեամբ մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն. . . . *օրհնութեամբ մեծացուցանեմք:*

Երրորդ տուն. . . . *զնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք*[17]:

Բ) Առաջին տուն. . . . *մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն. . . . *մեծացուցանեմք:*

Երրորդ տուն. . . . *անմատոյց լուսոյն երկրպագեսցուք*[18]:

Գ) Առաջին տուն. . . . *վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն. . . . *վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք:*

Երրորդ տուն. . . . *վասն որոյ բարեհաճեա նորոգել զմեզ ի հնութենէ մեղաց*[19]*:*

Առանց դոյզն-ինչ ջանք թափելու կարելի է նկատել, որ վերոյիշեալ երրորդ տների կրկնակները ոչ մի կերպ չեն ենթարկում մեր իմացած կանոնին (խօսքը Մանուկ Աբեղեանի ձեւակերպման մասին է), ինչն էլ հէնց մեծացուցէ շարականներին հաղորդում է տպաւորիչ յօրինուածք, քանի որ դրանով որոշակիօրէն ընդլայնում է արտահայտչաձեւերի շառաւիղը եւ ասելիքը տեղաւորւում աւելի ազատ ձեւերի մէջ:

Այժմ փորձենք դիտարկել շարականներ, որոնք կրկնակի արտայայտման տեսանկիւնից այլ հետաքրքրութիւն ունեն:

Յարութեան կանոնի մեծացուսցէներից երկուսի համար իբրեւ առաջին տուն հանդէս է գալիս կրկնակը: Իրականում այս շարականները բաղկացած են երկու տներից եւ առաջին տան դեր կատարող կրկնակից: Դարձը կրկնում է երկրորդ եւ երրորդ տների վերջնամասում եւ առաջին տան դեր ստանձնելով՝ ստեղծում հետեւեալ պատկերը.

Ա) Առաջին տուն (դարձ). *Ուրախ լեր, Աստուածածին՝ տաճար անիւսիւտելի, զքեզ մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն. . . . *Ուրախ լեր, Աստուածածին՝ տաճար անիւսիւտելի, զքեզ մեծացուցանեմք:*

Երրորդ տուն. . . . *Ուրախ լեր, Աստուածածին՝ տաճար անիւսիւտելի, զքեզ մեծացուցանեմք*[20]*:*

Բ) Առաջին տուն (դարձ). *Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն . . . . *Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:*

Երրորդ տուն . . . . *Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք*[21]*:*

Յարութեան շարականներից մեկը գրուած է բոլորովին այլ՝ մեզ անծանօթ կաղապարով. այստեղ իւրաքանչիւր տան սկզբում անփոփոխ է *«Մեծացուցանեմք զքեզ»* արտահայտութիւնը: Այնուհետեւ շարականագիրը պատճառաբանում է, թէ ինչի համար է պէտք

17 Տես «Շարական», էջ 21-22:
18 Տես անդ, էջ 48-49:
19 Տես անդ, էջ 162-163:
20 Տես «Շարական», էջ 57-58:
21 Տես անդ, էջ 62-63:

«մեծացուցանել» Քրիստոսին[22], իսկ այս շարականի կրկնակ կարելի է համարել հենց ամէն տան սկզբում հանդիպող *«Մեծացուցանեմք զքեզ»* փառաբանական արտայայտութիւնը:

Եւս երկու մեծացուսցէներ առանձնանում են իրենց կրկնակների անկանոնութեամբ: Առաջինը Ծննդեան ութերորդ օրուայ կանոնի մեծացուսցէն է: Այս շարականի առաջին տան մէջ կրկնակ յիշեցնող ոչ մի բառ չկայ, աւելին՝ ոչ մի փառաբանական իմաստ.

Յանձառ փառաց խոնարհեցար ի մեր բնութիւնս, Բանդ Ասպուած, եւ մարմնացար ի սրբոյ կուսէն:

Երկրորդ տունը եւս նախորդի նման պատմողական բնոյթի է, սակայն վերջում կցուած է «զքեզ անդադար բարեբանեալ մեծացուցանեմք» փառաբանական հատուածը, իսկ երրորդ տան վերջում՝ «միաբանութեամբ ամենեքեան մեծացուցանեմք»: Այս արտայայտութիւնները կրկնակ լինելու չափանիշին համապատասխանում են լոկ մի երեսով (քանի որ իրենց իմաստով փառաբանութիւն են արտահայտում): Այս արտահայտութիւնները, թէպէտ ամէն տան վերջում նոյնութեամբ չեն կրկնւում, սակայն հնարաւորութիւն են տալիս անելու հետեւեալ դիտարկումները. ա) խնդրոյ առարկայ արտայայտութիւններն ասես անկախ են շարականի բուն հիւսուածքից, եւ բ) հնարաւորութիւն են տալիս կարծելու, որ բոլորովին պարտադիր պայման չէ, որ կրկնուեն նմանատիպ հատուածներ: Շարականագիրը կարող էր նաեւ ազատ վարուել, ինչպէս այս դէպքում է:

Երկրորդ շարականը Յարութեան «Ասպուածածին մայր լուսոյ»[23] սկսուածքով շարականն է: Այստեղ նոյնութեամբ կրկնւում է նախորդ շարականի կառուցուածքային պատկերը: Առաջին տունը դարձեալ կրկնակ չունի.

Ասպուածածին մայր լուսոյ սուրբ կոյս լուսեղէն տաճար. որում երկինք չէին բաւական առ ի բնակութիւն, ի քէն մարմնացաւ:

Երկրորդ եւ երրորդ տների կրկնակները, որոշակի նմանութիւններով հանդերձ, այնուամենայնիւ տարբեր են.

Երկրորդ տուն .... *օրհնութեամբ մեծացուցանեմք:*

Երրորդ տուն .... *օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացուցանեմք:*

Կրկնակի գործածութեան առումով հետաքրքրական է Քրիստոսի Ծննդեան առաջին օրուայ կանոնի մեծացուսցէն. շարականի երեք տներն էլ ունեն միմեանցից արմատականօրէն տարբերուող կրկնակ:

Առաջին տուն .... *զքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք:*

Երկրորդ տուն .... *ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք:*

Երրորդ տուն .... *հրեշտակային օրհնութեամբ պարուրեալ զքեզ մեծացուցանեմք[24]:*

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ իմաստային առումով բերուած օրինակները հիմնականում անկախ են մնում բուն շարականի նիւթից: Նոյնը կարելի է ասել շարականի տեքստի մասին[25]: Գալով «մեծացուսցէ» արտայայտութեանը՝ անհրաժեշտ է նշել, որ

22 Անդ, էջ 56: Այս շարականը նուիրուած է ոչ թէ Տիրամօրը, այլ Քրիստոսին:

23 «Շարական», էջ 63-64:

24 Տես անդ, էջ 25:

25 Անշուշտ, այս հարցում եւս կան բացառութիւններ. օրինակ՝ Յարութեան կանոնի «Զասպուածածին եւ զմիշտ կոյսն...» սկսուածքով մեծացուսցէի առաջին տան դարձը եւ բուն տեքստը չափազանց ընդելուզուած են, այնպէս որ առանց դարձի յիշեալ տունն իմաստի տեսանկիւնից թերի կլինէր:

ժանրային տարատեսակը ձեւաւորուել է Մարիամի երգի «Մեծացուսցէ անձն իմ զՏէր...» արտահայտութեան (Ղուկ. Ա 46) հիման վրայ: Ուստի այս անունը կրող բոլոր շարակաների առանցքային նպատակը Տիրամօրը (մէկ-երկու դէպքում նաեւ Քրիստոսին) «մեծացուցանելն» է, ինչը, փաստօրէն, գործնական կիրառութիւն է գտնում միայն կրկնակների միջոցով:

Բ. Այս խմբի մեծացուսցէների կրկնակները, փառաբանական հատուածներ լինելով հանդերձ, չունեն «մեծացուցանեմք» արտահայտութիւնները (ընդամենը 16 շարական): Այսպիսի շարականների դասական օրինակ է Աղուհացից վեցերորդ կիրակի օրուայ կանոնի մեծացուսցէն.

Որ զանճառելին ծնաւ սուրբ Աստուածածին կոյս. ***օրհնեալ ես տէրդեան:***

Որ զարարչակիցն Հօր ի սկզբանէ Բանն Աստուած յորովայնի քում կրեցեր. ***օրհնեալ ես տէրդեան:***

Զքեզ Եզեկիէլ եւրեւ երկնային դուռն եւ հարսն անփորձ. ***օրհնեալ ես տէրդեան***[26]*:*

Այս խմբին պատկանող որոշ շարականներ կփորձենք քննել աւելի մանրամասն: Պէտք է ասել, որ այս խմբում եւս որոշ մեծացուսցէներ առանձնանում են իրենց կրկնակների իւրայատուկ եւ զարտուղի դրսեւորումներով, ինչպէս Նոր կիրակիի կանոնի մեծացուսցէն է, որի կրկնակն առաջին եւ երկրորդ տների համար նոյնն է, իսկ երրորդ տան համար՝ փոքր-ինչ փոփոխուած.

Առաջին տուն . . . . *եւ անդադար բարեբանեսցուք:*

Երկրորդ տուն . . . . *եւ անդադար բարեբանեսցուք:*

Երրորդ տուն . . . . *հոգեւոր երգով բարեբանեսցուք*[27]*:*

Ինչպէս նշեցինք, միջնադարեան բանաստեղծութեանը բնորոշ է կաղապարը: Եւ միջնադարում ստեղծուած բանաստեղծական նմոյշներին այսօրուայ աչքերով նայելիս թւում է, թէ նախ եղել է կաղապարը եւ ապա բանաստեղծութիւնը: Ծննդեան եօթներորդ օրուայ կանոնի ճաշու միաւորի տակ զետեղուած մեծացուսցէն քննելը չափազանց կարեւոր է այս առումով: Այս շարականի երեք տներն էլ սկսում են Աստուածամօրը գովերգող մակդիրաւոր արտայայտութիւններով. «Սիւն լուսոյ եւ ամպ հովանի», «Անկէզ մորենի եւ սրօբէ հողեղէն», «Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց», որոնց անմիջապէս յաջորդում է «Սուրբ Կոյս» արտայայտութիւնը, որից յետոյ նոյնական տրամաբանութեամբ երեք տներում էլ գալիս է մի տեսակ «պատճառաբանութիւն» պարունակող հատուած, որը բացայայտում է Տիրամօրը ձօնուած մակդիրների իմաստը, իսկ վերջում այս բոլորին յաջորդում է դարձը.

Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս, որ ցօղեցեր զցօղն երկնային. զքեզ բարեբանեմք, Աստուածածին կոյս:

Անկէզ մորենի եւ սրօբէ հողեղէն սուրբ կոյս, քանզի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ. զքեզ բարեբանեմք, Աստուածածին կոյս:

Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս, որ զանտանելին էից ի գիրկս քո բարձեր. զքեզ բարեբանեմք, Աստուածածին կոյս[28]*:*

Չի կարելի չնկատել, որ շարականի երեք տների համար էլ գործում է նոյն տաղաչա-

---

26 «Զայնքաղ շարական», Վաղարշապատ, 1988, էջ 165 (այսուհետ՝ «Զայնքաղ», էջ...):

27 Տես «Շարական», էջ 299-300:

28 «Շարական», էջ 49-50:

փական, կառուցուածքային եւ մտքի ամբողջացման գրամաբանութեան օրէնքը: Վերջին միտքն աւելի պարզ դարձնելու համար քննենք հէնց առաջին տունը: Բովանդակութեան տեսակէտից այս տունն աւելի կապարեալ տեսք կունենար, եթէ չլինէր *«Սիւն լուսոյ»* արտայայտութիւնը: Այդ դէպքում շարականագիրը Տիրամօրը պարզապէս կարող էր կոչել ամպ, որը ցօղում է երկնային ցօղ: Այստեղից հարց է ծագում, թէ ո՞րն է այս արտահայտութեան դերը: «Սիւն լուսոյ»-ն, որը շարականի առաջին տան հիմնական թէմայից դուրս է, հաւանաբար շարականագիրն օգտագործել է՝ ելնելով բանաստեղծութեան տների մէջ առկայ տաղաչափական որոշ օրինաչափութիւններից: Այսինքն շարականագրի նպատակն է եղել նաեւ հաւասարակշռուած պահել բոլոր տները: Իսկ առաջին տան մէջ միայն «ամպ հովանի» արտայայտութեան գործածութեան դէպքում միւս տներում առկայ մակդիրաւոր բնութագրումների համեմատութեամբ թերի պիտի հնչէր տուեալ տան արտաբերման տեւողութիւնը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հոգեւոր բանաստեղծութեան մէջ արհեստական կերպով որոշ «պահեստային» բառեր կամ արտահայտութիւններ էին ներմուծւում՝ թէկուզ բովանդակութեան հետ կապ չունեցող, միայն թէ չխաթարուէր քերթուածի բիւրեղեայ կառուցուածքը:

Իսկ «Սուրբ Կոյս» արտահայտութիւնն այս մեծացուցէում մեծ դեր է խաղում կշռոյթի տեսանկիւնից՝ իր վրայ վերցնելով բանաստեղծութեան հիմնական շեշտը եւ միեւնոյն ժամանակ եռամաս կառուցուածք ունեցող տների առաջին մասի համար ապահովում է նոյնական յանգաւորում:

Սուրբ Կոյս Մարիամի ծննդեան կանոնի համբարձի միաւորի տակ դրուած մեծացուցէն եւս բացառութիւն է դարձի արտայայտման տեսանկիւնից: Այս շարականի առաջին եւ երկրորդ տներն ունեն շատ յստակ, առանց դոյզն-ինչ դժուարութեան աչքի զարնող կրկնակ, որը, սակայն, ընդհանրապէս բացակայում է երկրորդ տան դէպքում[29]:

Շարականական այս խմբում Յարութեան «Մայր լուսոյն» սկսուածքով մեծացուցէն հրաշալի մի օրինակ է, որի մէջ արտայայտուած են առհասարակ շարականի այս տեսակին յատուկ բոլոր առանձնայատկութիւնները.

Մայր լուսոյն Մարիամ, անհարսնացեալ, օրհնեալդ ի կանայս:
Զլոյսն անսպուեր յարգանտի կրեցեր, օրհնեալդ ի կանայս:
Մի՛ դադարիր վասն մեր բարեխօսել, օրհնեալդ ի կանայս[30]:

Ընդհանրապէս Տիրամօրը նուիրուած մեծացուցէներում հիմնական մոտիւները երեքն են: Առաջինը՝ Տիրամօրը բնութագրող գովեստներն են (հիմնականում մակդիրաւոր արտայայտութիւններ), ապա՝ Աստուածամօր այս կամ այն գործողութեան նկարագրութիւնը, եւ վերջինը՝ բարեխօսական եւ փառաբանական տարբեր պարունակող հատուածը (վերջին հատուածում յիշեալ երկու թէմաները երբեմն հանդէս են գալիս ընդելուզուած, երբեմն էլ առանձին-առանձին՝ միմեանց փոխարինելով): Ինչպէս նկատեցինք, յիշեալ երանգները մեզ հետաքրքրող բանաստեղծութեան մէջ բաշխուած են բաւական յամաչափ՝ ըստ տների: Այսինքն՝ առաջին տունը մակդիրաւոր կիրառութիւններով Սուրբ Կոյսի գովերգութիւնն է, երկրորդ տունը պարզապէս Տիրամօր՝ «զլոյսն անսպուեր» կրելու իրողութեան նկա-

29 «Շարական», էջ 6:
30 Անդ, «Մեծացուցէք Յարութեան Տեառն», էջ 60:

րագրութիւնն է, իսկ երրորդը՝ բարեխօսական հատուած է: «Օրհնեալդ ի կանայս» դարձը ամբողջացնում է երրորդ տունը՝ այն դարձնելով նաեւ փառաբանական: Նշենք նաեւ, որ այս տեսակն իր բիւրեղեայ կառուցուածքով մեծացուցցէի հիմնական տիպն է, որտեղ ասելիքը խիստ ընդգծուած է պարզ ու մատչելի:

Թուով հինը մեծացուցէներ ունեն զուտ բարեխօսական աղերսանք պարունակող կրկնակներ: Բարեխօսական տարբեր պարունակող կրկնակներն առհասարակ հանդէս են գալիս երկու տարբերակով. օրինակ՝ Աղուհացից հինգերորդ օրուայ կանոնի մեծացուցցէի դարձը խնդրանք է՝ ուղղուած Տիրամօրը, որպէսզի նա միջնորդ դառնայ մարդկանց եւ Աստծոյ միջեւ. «Բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան»[31]: Նոյն բանը տեսնում ենք Աղուհացից երրորդ կիրակի օրուայ կանոնի մեծացուցցէի դարձի պարագային՝ «Լեր բարեխօս վասն անձանց մերոց»[32] եւ այլն: Այս դէպքում շարականագիրը հանդէս է գալիս մարդկութեան անունից եւ խնդրում «կեցուցանել զմեզ»[33], «բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ»[34] եւ այլն:

Այս խմբի մէջ են մտնում նաեւ «Համօրէն ննջեցելոց ի Քրիստոս» կանոնի երեք մեծացուցցէները, որոնց դարձերը, բնականաբար, նոյնպէս բարեխօսական խնդրանք են պարունակում, սակայն, այս դէպքում ոչ թէ համայն մարդկութեան, այլ ննջեցեալների համար. «աԱղաչանօք հայցեմք ի քէն զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո»[35] եւ այլն: Ցիշեալ շարականներից երկուսը (Բազմերամք վեհագունիցն..., Մեծ եւ ահեղ է օրն դատաստանի...)[36] սկզբունքօրէն տարբերւում են մեզ յայտնի միւս բոլոր մեծացուցցէներից՝ իրենց յօրինուածքի ընդարձակ բովանդակութեամբ (առաջինը նուիրուած է բացառաբար Քրիստոսին, եւ Տիրամօր վերաբերեալ ոչ մի ակնարկ չունի, իսկ երկրորդն ամբողջութեամբ հագեցած է վախճանաբանական նկարագրութիւններով): Հաւանաբար սրանք նախապէս իբրեւ մեծացուցցէ յօրինուած չեն եղել եւ հետագայում ինչ-ինչ պատճառներով արհեստականօրէն զետեղուել են այս միաւորի տակ:

Ցարութեան կանոնի թուով երեք մեծացուցցէներ մինչ այժմ մեր կողմից ուսումնասիրուած շարականների ոչ մի խմբում հնարաւոր չէ զետեղել: Դրանցից առաջինի՝ «Որ զհրեշտակին զձայնն լուեալ» սկսուածքով շարականի կրկնակը կառուցուածքի տեսանկիւնից նմանութիւն չունի մինչ այժմ մեր դիտարկած եւ ոչ մի կրկնակի: Մեծացուցցէ շարականների բոլոր կրկնակները՝ լինեն դրանք փառաբանական թէ բարեխօսական, հիմնականում սահմանափակւում են մէկ պարզ նախադասութեան մէջ եւ հետեւաբար արտայայտում են մէկ տրամադրութիւն: Այս պարագային դարձը ձեւակերպուած է փառաբանական տրամադրութիւն արտահայտող երկու պարզ նախադասութիւններով. առաջինը՝ «բարեխօսեա վասն մեր», որ Տիրամօրն ուղղուած խնդրանք է, իսկ երկրորդը՝ «մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս»[37]: Վերը նշեցինք, թէ մեծացուցցէ շարականների երեք հիմնական մոտիւներից մէկը բարեխօսական եւ փառաբանական տրամադրութիւն արտայայտող հատուածներն են, երբեմն հանդէս են գալիս ընդելուզուած, երբեմն ել առանձին-առանձին: Հարկ ենք համա-

31 Տես «Շարական», էջ 185:
32 Տես անդ, էջ 142-143:
33 Տես «Բուն Բարեկենդանի մեծացուցցէի դարձը» էջ 116:
34 «Զայնքաղ շարական», էջ 22:
35 Տես «Շարական», էջ 684:
36 Տես անդ, համապատասխանաբար էջ 684 եւ 685:
37 Տես «Շարական», էջ 56:

րում աւելացնել, որ խօսքը շարականների բուն նիւթի եւ ոչ թէ կրկնակի մասին է: Բարեխօսութիւնն ու փառաբանութիւնը կարող են ընդելուզուած արտայայտուել շարականի տեքստի մէջ, իսկ մինչ այժմ մեր քննարկած բոլոր կրկնակներն արտայայտում էին յիշեալ երկու իմաստներից կա՛մ մեկը, կա՛մ միւսը: Այս տեսանկիւնից խնդրոյ առարկա շարականի կրկնակը միակն է, որ արտացոլում է այդ երկու թեմաները միասին:

Երկրորդ բացառութիւնը «Ի քեզ եմք ապաւինեալ» սկսուածքով շարականի դարձն է՝ «Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ»[38]: Կարծում եմ՝ այն կարելի է նաեւ որպէս կրկնակ չընկալել եւ դրանով հարցը փակել, քանի որ այս «կրկնակ» կոչուածը խիստ տարբերւում է կրկնակի մասին ունեցած պատկերացումներից: Այստեղ չկայ ո՛չ փառաբանութիւն եւ ո՛չ էլ բարեխօսութիւն պարունակող արտաքին իմաստ, բայց, այնուամենայնիւ, այն կրկնւում է շարականի բոլոր երեք տներում: Թէպէտ կարելի է նկատել բանաստեղծի ներքին, ծածուկ միտքը՝ Տիրամօրը Քրիստոսի մայր կոչելով՝ նրան պատւելու եւ մեծարելու ցանկութիւնը: Այնուամենայնիւ, այս շարականին ծանօթանալուց յետոյ համարձակօրէն կարելի է պնդել, որ դարձը կարող է լինել սոսկ ամէն տան վերջում կրկնուող հատուած, ինչպէս այս շարականի դեպքում է:

«Զաստուածածինն եւ զմիշտ կոյսն» սկսուածքով շարականի առաջին եւ երկրորդ տները թէեւ աւարտւում են *«անձանց մերոց»* արտայայտութեամբ[39], իսկ երրորդ տունը *«կեցուցանել»* բայի թելադրանքով՝ *«զանձինս մեր»* ձեւով, սակայն, կարծում ենք չի կարելի դրանք իբրեւ կրկնակ ընկալել: Երեւոյթը տեղաւորւում է միջնադարեան՝ ամէն ինչ կաղապարի տակ դնելու միտումի մէջ, որով լուծւում էր նաեւ տների նոյնայանգութեան հարցը: Որքան էլ զարմանալի է, վեց մեծացուցէներ եւս առհասարակ կրկնակ չունեն: Այդ շարականներից մեկը Ծաղկազարդի կանոնի Քրիստոսին նուիրուած մեծացուցէն է[40]: Սրանում Աստուածածնի վերաբերեալ ոչ մի ակնարկ չկայ. այն գրուած է պատմողական ոճով եւ խօսում է Քրիստոսի աստուածային կեանքի դրուագներից մէկի՝ յաղթականօրէն Սուրբ քաղաք մտնելու մասին: Եւ եթէ շարականի բովանդակութիւնը Տիրամօր մասին չէ, ապա տրամաբանական է, որ այն Տիրամօրն ուղղուած բարեխօսական հատուածներ կարող է եւ չունենալ, սակայն ոչինչ չէր խանգարի շարականագրին, որ նա իբրեւ կրկնակ որեւէ փառաբանական հատուած կցէր իր ստեղծագործութեանը՝ յարմարեցնելով ընդունուած չափորոշիչներին:

Մնում է եզրակացնել, որ մեծացուցէ յօրինելիս թէեւ գոյութիւն են ունեցել մասնայատուկ կանոններ, որոնց հետ հաշուի է նստել շարականագիրը, սակայն շատ դէպքերում այդ կանոնները շրջանցուել են, ինչպէս տեսանք վերոյիշեալ մի շարք շարականների պարագային:

38 Տե՛ս անդ, էջ 66:
39 Տե՛ս անդ, էջ 61-62:
40 Տե՛ս «Շարական», էջ 231: